ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով պետությունների միջեւ մշակութային համագործակցության հետագա զարգացմանը,

գիտակցելով, որ նման համագործակցության զարգացումը համապատասխանում է իրենց պետությունների ժողովուրդների արմատական շահերին, նպաստում է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության Խորհրդակցության Հելսինկիի Եզրափակիչ ակտով, Անկախ Պետությունների Համագործակցության հիմնարար փաստաթղթերով հռչակված նպատակների ձեռքբերմանը,

համարելով, որ պետությունների միջեւ մշակութային համագործակցության զարգացումը անհնար է առանց իրենց համատեղ աշխատանքին մշակույթի հարցերում շահագրգռված միջազգային եւ ազգային ոչ կառավարական կազմակերպություններ, ասոցիացիաներ եւ միավորումներ ներգրավելու,

ելնելով "Մշակույթի բնագավառում համագործակցության մասին" Տաշքենդում՝ 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրված Համաձայնագրի դրույթներից, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Մշակույթի բնագավառում համագործակցության մասին, Տաշքենդում՝ 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրված Համաձայնագրի 1-ին հոդվածում սահմանված մշակույթի բնագավառում Կողմերի կողմից համակարգված քաղաքականություն վարելու նպատակով ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մշակութային համագործակցության Խորհուրդ, այսուհետ՝ Խորհուրդ: Հաստատել Խորհրդի Կանոնադրությունը, որը սույն Համաձայնագրի անբաժանելի բաղկացուցիչ մասն է (կցվում է):

ՀՈԴՎԱԾ 2

Խորհուրդը հաստատում է ընթացակարգի իր Կանոնները եւ Աշխատակարգը:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է ընկալվի որպես մշակութային համագործակցության բնագավառում Կողմերի իրավունքները սահմանափակող:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար պահանջում է ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան փաստաթղթերը ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրն իր ուժը կորցնում է այն Կողմի համար, որը ավանդապահին ծանուցել է Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին, ավանդապահի կողմից համապատասխան ծանուցում ստանալու օրվանից վեց ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի ավանդապահն է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունը:

Կատարված է Մինսկ քաղաքում 1995 թվականի մայիսի 26-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հաստատված է
Անկախ Պետությունների Համագործակցության
մասնակից պետությունների մշակութային
համագործակցության Խորհրդի ստեղծման
մասին Անկախ Պետությունների
Համագործակցության Կառավարությունների
ղեկավարների Խորհրդի 1995 թվականի
մայիսի 26-ին ընդունած Համաձայնագրով

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մշակութային համագործակցության գծով Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) իր առջեւ խնդիր է դնում Համագործակցության մասնակից պետությունների մշակութային համագործակցության հետագա զարգացումը՝ մշակույթի ղեկավարման պետական մարմինների, միջազգային, տարածաշրջանային եւ ազգային միավորումների եւ ասոցիացիաների մշակույթի եւ արվեստի գործիչների գծով:

1.2. Իր գործունեության մեջ Խորհուրդը ղեկավարվում է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության Հելսինկիի Եզրափակիչ ակտով, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների հիմնարար փաստաթղթերով եւ սույն Կանոնադրությամբ հռչակված սկզբունքներով:

1.3. Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Մշակութային համագործակցության վիճակի հարցերի քննարկումը, "Մշակույթի բնագավառում համագործակցության մասին" Տաշքենդում՝ 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրված Համաձայնագրի, մշակութային համագործակցության մասին այլ բազմակողմ համաձայնագրերի շրջանակներում փոխգործակցության արդյունքների ամփոփումը:

Մշակութային համագործակցության հետագա զարգացման հնարավորությունների ուսումնասիրումը, ներառյալ Համագործակցության շրջանակներում մշակութային կապեր իրականացնող պետական եւ հասարակական կառույցների փոխգործակցությունը. Համագործակցության մասնակից պետությունների շահագրգռվածությանը համապատասխան Համագործակցության շրջանակներում մշակույթի բնագավառում գործընթացների եւ միտումների ուսումնասիրում:

2.2. Մշակույթի բնագավառում բազմակողմ ծրագրերի նախագծերի քննարկում եւ դրանց ներառումը Համագործակցության մասնակից պետությունների կանոնադրական մարմիններում:

Մշակութային բազմակողմ ծրագրերի պատրաստում եւ ընդունում, Խորհրդի

իրավասության շրջանակներում համատեղ միջոցառումների անցկացում:
2.3. Մշակույթի բնագավառում համաձայնեցված գործողություններ մշակելու համար օժանդակության ցուցաբերում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մշակույթի մարմիններին, հասարակական կազմակերպություններին:
2.4. Մշակույթի բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության համակարգում:
2.5. Ստեղծագործ աշխատողների սոցիալական պաշտպանության, մտավոր սեփականության, հեղինակային եւ հարակից իրավունքների ապահովման համար Համագործակցության մասնակից պետությունների փորձի ուսումնասիրում եւ ընդհանրացում:

3. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Խորհուրդը ձեւավորվում է Խորհրդի անդամ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներից (յուրաքանչյուր պետությունից մեկական): Յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն:
Խորհրդի կազմի մեջ, որպես անդամ, ձայնի իրավունքով մտնում է մշակույթի եւ արվեստի գործիչների միջազգային ստեղծագործական հասարակական միավորումների Համակարգող խորհրդի, որը ներառում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ազգային կազմակերպությունները միավորող միջազգային ստեղծագործական հասարակական կազմակերպությունները (ասոցիացիաներ, միություններ, հիմնադրամներ), նախագահը:
3.2. Խորհրդի աշխատանքներին նրա որոշմամբ խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մշակույթի եւ արվեստի գործիչների միջազգային եւ ազգային ստեղծագործական հասարակական միավորումների ղեկավարները:
3.3. Խորհրդի նախագահը, նրա տեղակալը ընտրվում են Խորհրդի կողմից, հաջորդաբար, Խորհրդի անդամներից՝ Համագործակցության մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներից:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Խորհրդի նիստերը անց են կացվում ըստ անհրաժեշտության, սակայն առնվազն տարին երկու անգամ եւ իրավասու են համարվում, եթե նիստերին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:
Հերթական նիստի անցկացման վայրը որոշվում է Խորհրդի անդամների միջեւ նախնական պայմանավորվածությամբ:
4.2. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող նրա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Խորհուրդը այլ բան չի որոշում: Խորհրդի ցանկացած անդամ կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր ոչ շահագրգիռ լինելու մասին, ինչը որոշումն ընդունելու համար չպետք է դիտվի որպես խոչընդոտ: Որոշման հետ անհամաձայն Խորհրդի անդամները կարող են հատուկ կարծիք արտահայտել, որը ներառվում է նիստի արձանագրության մեջ:
4.3. Խորհուրդը կարող է Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի քննարկմանը ներկայացնել փաստաթղթերի նախագծեր՝ Համագործակցությունում ընդունված ընթացակարգային կանոններին համապատասխան:
4.4. Նիստերի համար հարցերի, վերլուծական եւ տեղեկատվական նյութերի պատրաստման համար, Խորհուրդը կարող է ստեղծել աշխատանքային հանձնաժողովներ եւ փորձագիտական խմբեր:
4.5. Խորհրդի նիստերը ձեւակերպվում են արձանագրություններով, որոնք ստորագրում է Խորհրդի նախագահը եւ ուղարկվում են Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությանը:

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

5.1. Խորհրդի նիստերի անցկացման ծախսերը հոգում է Համագործակցության այն մասնակից պետությունը, որի տարածքում անց է կացվում Խորհրդի նիստը:

Խորհրդի անդամների գործուղման հետ կապված ծախսերը հոգում է ուղարկող պետությունը:

5.2. Խորհրդի աշխատանքի կազմակերպչատեխնիկական ապահովումը իրականացվում է մշակույթի ղեկավարման գծով Համագործակցության մասնակից պետությունների համապատասխան պետական մարմինների կողմից:

5.3. 2-րդ բաժնով նախատեսված բազմակողմ ծրագրերի ֆինանսավորումը ձեւակերպվում է լրացուցիչ փաստաթղթերով:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 12-ից: